Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԾՁԲ-25/3-Փ ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 14.07.2025թ.
Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Գաբրիելյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ Ս. Ասրյանը, Լ. Թունյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

ՋԿ-ԳՀԾՁԲ-25/3-Փ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների
կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի
ուսումնասիրության արդյունքներ

04.07.2025թ. գնահատող հանձնաժողովի նիստում՝ «Վոթըր պրոջեկտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ.

Ուսումնասիրության արդյունքում.

Ընկերության կողմից սահմանված կարգով և ժամկետում հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկվել են:

ՋԿ-ԳՀԾՁԲ-25/3-Փ ծածկագրով ընթացակարգի բանակցությունների վերաբերյալ

ՋԿ-ԳՀԾՁԲ-25/3-Փ ծածկագրով ընթացակարգի Չափաբաժին 1-ի մասնակիցներ՝ «Վոթըր պրոջեկտ» ՍՊԸ-ն և «Ջրարբի» ՍՊԸ-ն ներկայացրել են հավասար նվազագույն գներ:

Հիմք ընդունելով Հրավերի 8.6 կետը գնահատող հանձնաժողովը նիստը կասեցնում է, «Վոթըր պրոջեկտ» ՍՊԸ-ին և «Ջրարբի» ՍՊԸ-ին հրավիրում գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում (սենյակ 400) 16.07.2025թ. ժամը 12:30-ին: Բանակցություններին տրվող ժամանակը՝ 10 րոպե: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների որոշվում և հայտարարվում են ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցները:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ _____ Ռ. Գաբրիելյան

անդամներ _____ Ս. Ասրյան

_____ Լ. Թունյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան